



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱԴՊԵՏԷ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 23 Օգոստոսին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Օրենճ Բաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին ներկայ պիտի ըլլայ եւ պիտի քարոզէ Քուէյթի եւ Արաբական Ծոցի Երկիրներուն Կաթողիկոսական փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեան:

## **H. E. THE PRELATE TO PRESIDE OVER HOLY MASS AT FORTY MARTYRS CHURCH OF ORANGE COUNTY**

On Sunday, August 23, His Eminence Arch. Moushegh Mardirossian will preside over Holy Mass at the Forty Martyrs church in Orange County and deliver the sermon. The Catholicosal Vicar of Kuwait and the Gulf Countries, H. E. Arch. Gorun Babian, who is visiting Los Angeles, will preside over Holy Mass at the Holy Martyrs church in Encino and deliver the sermon.



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ԽԱՂՈՐՈՐՅՆԷՔ ԿԱՏԱՐԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**



Ս. Աստուածածնայ Վերափոխման Եւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան զոյգ տօներուն առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը Կիրակի, 16 Օգոստոսին Ս. Պատարագ մատուցանեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ապա, յաւարտ Ս. Պատարագի, կատարեց խաղողօրհնէքի ականդական արարողութիւնն ու մատաղի օրհնութիւնը: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը հանգամանօրէն անդրադարձաւ Աստուա-

ծամօր առաքիլութիւններուն, որ դարեր շարունակ օրինակ ծառայած է բոլոր քրիստոնէայ կիներուն: Ան վեր առաւ Աստուածամօր ազնւութիւնը, խոնարհութիւնն ու Աստուծոյ պատուիրաններուն ու թելադրանքներուն հաւատարիմ կատարող մը ըլլալու հանգամանքը, որոնց համար արժանացաւ շնորհներու:

Քարոզի ականդակներէն, Առաջնորդ Սրբազանը կատարեց բացումը եկեղեցւոյ շրջափակին մէջ հաստատուած ցուցատախտակին, որուն վրայ պիտի արձանագրուին եկեղեցւոյ արարողութեանց ու ձեռնարկներուն ժամանակացոյցը: Այս ցուցատախտակը նախաձեռնութիւնն է եկեղեցւոյ երիտասարդական խմբակին:





**PRELATE CELEBRATED THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD AT ST. MARY’S CHURCH IN GLENDALE**



On Sunday, August 16<sup>th</sup>, and on the occasion of the Feast of the Assumption of the Holy Mother of God, as well as the name day of St. Mary’s Church in Glendale, the Prelate celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Mary’s Church.



His Eminence highlighted the virtues of

the Holy Virgin, stressing that she was a model role to all Christian women, and especially the Armenian women throughout centuries

The Prelate also conducted the blessing of *madagh* (offering) and grapes following Divine Liturgy.

After the ceremonies, the Prelate and the church officials headed to the front yard of the church where the blessing of the newly erected sign-post was performed.







## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ ՅԻՐԸՆԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՔԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ



Միացեալ Նահանգներու Արեւելեան, Արեւմտեան Թեմերու եւ Քանադայի Թեմի երեք Առաջնորդները՝ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան ( Արեւելեան Թեմ), Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան (Արեւմտեան Թեմ) եւ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան (Քանադայի Թեմ) Օգոստոս 19 եւ 20ին, յատուկ հանդիպում մը ունեցան Քանադայի Յայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին մէջ:

Երեք Առաջնորդները քննարկեցին Թեմերը յուզող հասարակաց հարցեր, որոնցէն փոխ յարաբերութիւնները սերտացնող նորանոր միջոցներ եւ պատրաստեցին թեմերու կեանքին առնչուած հոգեւոր, վարչական, տնտեսական, կազմակերպչական, յարաբերական հարցեր շօշափող ծրագիրներ, ինչպէս եւ թեմերու եկեղեցիներուն հետ կապուած ծիսական, դաստիարակչական, կենցաղային ու բարեկարգութեանց հետ կապուած հարցերու թղթածրարներ:

Յիշեալ հարցերն ու ծրագիրները պիտի քննարկուին Անթիլիասի մէջ Նախատեսուած այն ժողովին, որ յառաջիկայ Նոյեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կրօնական եւ Քաղաքական Ժողովները պիտի համախմբէ Ամերիկային երեք թեմերու Առաջնորդներուն ու ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ:



## NORTH AMERICA'S THREE PRELATES HOLD A TWO DAYS MEETING IN CANADA

The Prelates of the Eastern and Western Prelacies of the United States, His Eminence Archbishop Oshagan Choloyan and His Eminence Archbishop Moushegh Mardirossian, held consecutive meetings with His Eminence, Archbishop Khajag Hagopian, Prelate of the Armenian Prelacy of Canada, in Montreal on August 19 and 20, 2009.



The Prelates planned several projects related to the spiritual, administrative, financial, and organizational aspects of the Prelacies. They also prepared reports on all of the churches of the North American Prelacies, with regards to the different communities and services each church offers, in order to meet the spiritual needs of its members and the requirements of Christian education tasks.

The Prelates also discussed common concerns and issues, as well as new methods of improving communication and dialogue between the Prelacies.

The issues and projects outlined during these sessions will be further examined during the next World Assembly meeting at the Armenian Catholicosate of Cilicia in Antelias, Lebanon, in November of this year.



## ՎԵՐԱՄՈՒՏ

Ամառնային արձակուրդէն ետք, Ազգ. Վարժարանները քանի մը օրէն պիտի վերաբանան իրենց դուռները, ընդունելու համար մանկամտուրէն մինչեւ երկրորդական կարգի աշակերտներ, հայկական հոգեւոր ու մշակութային ավանդներով եւ առողջ մթնոլորտի ներքեւ դաստիարակելու մեր նորահաս սերունդը: Հինգշաբթի, Օգոստոս 27-ը վերամուտ է Սան Ֆրանսիսքոյի Գուրգեան Չաքարեան Վասպուրական Ազգային վարժարանին:

Ուսումնական առաջին օրը պիտի գործադրուի կոկիկ յայտագիր մը. ծնողները առիթ պիտի ունենան ծանօթանալու վարժարանի նոր տնօրէնուհիին՝ Տիկին Կրէյս Անտոնեանի:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ բացման հանդիսութեան եւ իր օրհնութիւններն ու յաջողութեան մաղթանքները պիտի փոխանցէ վարժարանի տնօրէնութեան, պատկան մարմիններուն, ուսուցչակազմին, աշակերտութեան եւ ծնողներուն:

Հինգշաբթի, Օգոստոս 27-ը վերամուտ է նաեւ Վահան եւ Անուշ Շամլեան Ազգ. Վարժարանի առաջին դասարանի աշակերտներուն համար: Պիտի գործադրուի կոկիկ յայտագիր մը, ծնողները առիթ պիտի ունենան ծանօթանալու ուսուցիչներուն, կրթական ծրագիրին եւ վարժարանի մթնոլորտին:

Յայտնենք, որ Ազգային բոլոր վարժարանները Հինգշաբթի, 3 Սեպտեմբերի առաւօտուն պաշտօնապէս պիտի վերաբանան իրենց դուռները եւ ուսումնական 2009-2010 տարեշրջանը սկիզբ պիտի առնէ:

Առաջնորդ Սրբազան հօր եւ Թեմիս հոգեւոր հայրերու առաջնորդութեամբ, վերամուտը պիտի կատարուի աղօթքով եւ բացման արարողութիւններով:

## BACK TO SCHOOL

The summer vacation of the schools is almost over and both students and educators are ready for the new academic year of 2009-2010.

The official back to school day of the Prelacy schools is the morning of September 3<sup>rd</sup>. His Eminence the Prelate and the Pastors of your churches will join the students and educators in prayer for a successful new year.

His Eminence the Prelate will visit San Francisco's Krouzian-Zekairain-Vasbouragan school on Thursday, September 27, for the official opening ceremony of the new academic year.



## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏ

Արեւմտեան մեր Թեմին համար, հաջվերացի տօնը աւանդաբար մեր Կիրակնօրեայ դպրոցներու վերամուտի եւ աշակերտներու արձանագրութեան օրն է:

Արձանագրութիւնները կը սկսին Կիրակի, Սեպտեմբեր 6-ին: Իսկ Կիրակի, Սեպտեմբեր 13-ին, հաջվերաց տօնին, մեր եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարանները պաշտօնապէս պիտի բանան իրենց դուռները, ընդունելու համար մեր մանուկներն ու պատանիները, որոնք առիթը պիտի ունենան հաղորդակից դառնալու հայ եկեղեցւոյ հաւատքին եւ պատմութեան:

Առ ի պատրաստութիւն Նոր տարեշրջանին, Շաբաթ, Սեպտեմբեր 5-ին, Առաջնորդ Սրբազան հօր Նախագահութեամբ, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինի Նախաձեռնութեամբ եւ առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեանի, ուսուցչական լսարան-հաւաք մը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներուն եւ ուսուցիչներուն համար:

Ուսուցիչներուն պիտի ներկայացուի տարեկան ուսումնական ծրագիրը:

Կիրակնօրեայ դպրոցներու լսարան-հաւաքը կը զուգահիւսի Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն» մատրան մէջ ամսական դրութեամբ տեղի ունեցող հերթական Ս. Պատարագին: Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Շաբաթ, Սեպտեմբեր 5-ի երեկոյեան Ս. Պատարագ պիտի մատուցուի մատրան մէջ:

## SUNDAY SCHOOLS ALSO RESTART THEIR MISSION

The Sunday Schools of our churches will restart their mission on the day of the Holy Cross.

Registrations will start on Sunday, September 5<sup>th</sup> at the church offices.

Prior to the new school year, the Christian Education department of our Prelacy has organized a one day conference for the directors and teachers of Sunday schools. The day long conference will be held under the auspices of His Eminence the Prelate on Saturday, September 5<sup>th</sup>, at the Prelacy's Dikran and Zarouhi Der Ghazarian Hall, starting 11 am.

The same evening, Devine Liturgy will be offered at the Prelacy's St. Dertad and St. Ashkhen chapel. The Prelate will preside over the ceremony that starts at 6:30 pm.